**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«27» դեկտեմբերի 2024 թ. N 186-Ա/1

## ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 34-րդ կետի պահանջով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի N135-Ա/1 հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունած N 8 որոշումը:

12/27/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

**Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ՈՐՈՇՈՒՄ N 8

Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվելիք միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի

« 26 » դեկտեմբերի 2024 թվական

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 31-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 26-ի մրցութային հանձնաժողովի N 3 արձանագրությունները.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ կարող է կնքվել դրամաշնորհի պայմանագիր՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի շրջանակներում հայտ ներկայացրած սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ չի կարող կնքվել դրամաշնորհի պայմանագիր՝ համաձայն N 2 հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տեր-Բալյան

Անդամներ՝ Ա. Կեսոյան

Ս. Հովակիմյան

Ա. Հակոբյան

Ա. Մկրտչյան

Ա. Ասատրյան

Քարտուղար՝ Լ. Մկրտչյան

Հավելված N 1
Մրցութային հանձնաժողովի
2024 թ. դեկտեմբերի 26-ի N 8 որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների, որոնց հետ կարող է կնքվել դրամաշնորհի պայմանագիր

| Չափաբաժին | | Առաջին տեղը զբաղեցնող կազմակերպություն | Շահառուների թվաքանակ | Պետական բյուջեից հատկացված գումար |
|---|---|---|---|---|
| **«Հաշմանդամություն ունեցող երեխաների տնային խնամքի ծառայություններ»** | | | | |
| 1. | Լոտ 1. Երևան | Առաքելություն Հայաստան | *Ամսական 50 շահառու* | 29,569,000 |
| 2. | Լոտ 2. Մարզ - 1 | Առաքելություն Հայաստան | *Ամսական 50 շահառու* | 29,569,000 |
| 3. | Լոտ 3. Մարզ - 2 | Առաքելություն Հայաստան | *Ամսական 45 շահառու* | 26,612,100 |
| 4. | Լոտ 4. Մարզ - 3 | Առաքելություն Հայաստան | *Ամսական 25 շահառու* | 14,784,500 |
| **«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»** | | | | |
| 5. | Լոտ 1 | Հայաստանի Կույրերի Միավորում հաշմանդամների հասարակական կազմակերպություն | *Ամսական 10 շահառու* | *4,128,000* |

Հավելված N 2
Մրցութային հանձնաժողովի
2024 թ. դեկտեմբերի 26-ի N 8 որոշման

# ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի շրջանակներում հայտ ներկայացրած սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների, որոնց հետ չի կարող կնքվել դրամաշնորհի պայմանագիր

| | Չափաբաժին | Կազմակերպություն |
|---|---|---|
| **«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում»** | | |
| 1 | Լոտ 1 – Երևան | Փյունիկ բիկ |